

**ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ՀԱՅ-ԼԱՏՎԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով հայ-լատվիական միջկառավարական համատեղ հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2009թ. դեկտեմբերի 10-ին «Հայաստանի Հանրապետության կառավարության և Լատվիայի կառավարության միջև տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության մասին» Համաձայնագրի: Հայկական կողմից հանձնաժողովի նախագահին է ՀՀ էկոնոմիկայի նախարարը: Հայ-լատվիական միջկառավարական համատեղ հանձնաժողովի անդրանիկ նիստը տեղի է ունեցել 2013թ. հունիսի 28-ին՝ Ռիգայում: Նիստի ընթացքում քննարկվել են Հայաստանի և Լատվիայի միջև առևտրատնտեսական, ներդրումային, ֆինանսական, մշակութային, գյուղատնտեսության, առողջապահության և տարածքային կառավարման ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարները, ԵՄ-ի հետ ընթացիկ համագործակցությանն, ինչպես նաև Հայաստանի և Լատվիայի միջև գործարար կապերի խորացմանն առնչվող հարցերը: Հանձնաժողովի հերթական երկրորդ նիստը նախատեսվում է անցկացնել Երևանում: